

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ**ԴԻԻԱՆ ՍՈՒՐԲ ԱԹՈՌՈՅ****ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ**

Երուսաղէմի Հայոց Պատրիարքութիւնը խստիւ կը դատապարտէ Սրբոց Յակոբեանց Միաբաններէն Հոգշ. Տ. Արքակ Աբղ. Սարուխանեանի վրայ հրեայ երիտասարդներու յարձակումը՝ Սուրբ Յարութեան տաճարի ճամբուն վրայ, 18 Մայիս, 2021-ին:

Հայր Արքակ ստացած է մարմնական վնասուածք: Ան անմիջապէս տեղափոխուած է հիւանդանոց, եւ անհրաժեշտ բուժօգնութիւն ստանալէ ետք, դուրս ելած է:

Պատրիարքութիւնը պաշտօնապէս բողոք ներկայացուցած է ոստիկանութեան, որմէ ետք յարձակողներէն երեքը ձերբակալուած են:

Մեր պահանջն է, որ ոստիկանութիւնը արդար քննութիւն կատարէ եւ յանցագործները պատժէ համաձայն օրէնքի՝ ապագային խուսափելու նման դէպքերու կրկնութենէ:

ԴԻԻԱՆ Ս. ԱԹՈՌՈՅ**ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ**

Այսու գրով կը տեղեկացնենք մերազն ժողովուրդին, որ Երուսաղէմի հայոց թաղամասի կայանատեղիի (parking) պարիսպի քանդման մասին ընկերային ցանցերու մէջ վերջերս տարածուած տեղեկութիւնները բացարձակապէս իրականութեան հետ աղերս չունին:

Երուսաղէմի քաղաքապետարանի ճարտարապետական բաժնի մասնագէտներու կատարած հետազօտութիւնը պարիսպը վթարային նկատած է եւ հետազօտութեան արդիւնքները գրաւոր ներկայացուցած է Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան:

Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանը եւ քաղաքապետարանը համատեղ համաձայնութեամբ որոշած են քանդել վթարային պարիսպը եւ 45 օրուայ ընթացքին նոյն տեղւոյն վրայ կառուցել նոր պարիսպ մը:

ԴԻԻԱՆ Ս. ԱԹՈՌՈՅ**ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ**

Կարգալոյծ հռչակուած է Տ. Նորայր Վրդ. Գազազեան:

Նորին Ամենապատուութիւն Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի տնօրինութեամբ կարգալոյծ հռչակուած է Տ. Նորայր Վարդապետ Գազազեան:

Տնօրինութեան համար որպէս հիմք ընդունուած է Նորայր Վարդապետի՝ Սրբոց Յակոբեանց Միաբանութեան անդամակցութենէ եւ կուսակրօնութենէ հրաժարելու մասին դիմումը:

Կարգալոյծ եկեղեցականը յետ այսու կը դասուի աշխարհականներու կարգին՝ Հայկ Գազազեան աւագանի անունով:

ԴԻԻԱՆ Ս. ԱԹՈՌՈՅ